«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ N 6/7

ք. Երևան 9 փետրվարի 2023 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 15-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 15-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը որոշում է.

1. հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-2026 թվականների ծրագրի իրականացման կարգը՝ համաձայն Հավելված 1-ի,
2. հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-2026 թվականների ծրագիրը՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
2023 թ. փետրվարի 9-ի թիվ 6/7 որոշման

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Հ. Վ. Հովհաննիսյան

Կ Ա Ր Գ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) սահմանվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) պրոֆեսորադասախոսական կազմի (այսուհետ՝ դասախոսներ) 2023-2026 թվականների վերապատրաստման ծրագրի իրականացման կարգն ու պայմանները:

2. Սույն կարգի մշակման իրավական հիմքերն են ՀՀ օրենսդրությունն ու ԵՊՀ կանոնադրությունը:

3. ԵՊՀ-ում դասախոսների վերապատրաստումը իրականացվում է ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-2026 թվականների ծրագրին» (այսուհետ՝ ծրագիր) համապատասխան:

4. Դասախոսների վերապատրաստման կազմակերպման գործընթացը համակարգում և վարում է ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնը (այսուհետ՝ կենտրոն):

2. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԴԱՍԱԽՈՍԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Ծրագրի շրջանակում ԵՊՀ-ի կազմակերպած վերապատրաստման դասընթացներին (այսուհետ՝ դասընթացներ) դասախոսը մասնակցում է կամավոր:

6. ԵՊՀ դասախոսը ծրագրով նախատեսված դասընթացներին կարող է մասնակցել սույն կարգի 25-րդ կետով սահմանված փուլերի ընթացքում՝ յուրաքանչյուր փուլի համար սահմանված ժամանակացույցին համապատասխան ու անհատական ծրագրով:

7. Դասախոսի կողմից դասընթացի ընտրությունն ու դրան մասնակցությունը կատարվում են հետևյալ մեխանիզմով.

1) դասախոսը լրացնում է առցանց ինքնագնահատման հարցաշար՝ կազմված ծրագրի Աղյուսակ 2-ում ընդգրկված բաղադրիչների հիման վրա, ինչի միջոցով կենտրոնը բացահայտում է դասախոսի ուժեղ ու թույլ կողմերը, վերապատրաստման կարիքները, այնուհետև անհատական խորհրդատվության միջոցով ձևավորում է դասախոսի վերապատրաստման անհատական փաթեթն ու ժամանակացույցը,

2) դասախոսը մասնակցում է վերապատրաստման անհատական փաթեթով ու ժամանակացույցով նախատեսված դասընթացներին ու ատեստավորման արդյունքում հավաքում է միավորներ:

8. Ծրագրի շրջանակում ձևավորվող առավելագույն ընդհանուր միավորը 30-ն է:

2022 թվականի ընթացքում դասախոսի մասնակցած դասընթացներից հավաքած ու ատեստավորման հանձնաժողովի կողմից հաստատված միավորները ևս հաշվարկվում են ծրագրի շրջանակում:

9. Միավորները կարող են ձևավորվել նաև դասախոսների ատեստավորման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) հաստատած ցանկում ընդգրկված այլ կազմակերպությունների կողմից անցկացված վերապատրաստման դասընթացների միջոցով:

10. Դասընթացները կարող են իրականացվել առկա, առցանց կամ համակցված՝ երկուսի զուգակցմամբ հայերեն, ինչպես նաև օտար լեզուներով:

11. ԵՊՀ-ն բաց մրցութային ընտրության եղանակով կատարում է դասընթացի վերապատրաստողների ու կրթական ծրագրերի ընտրություն, որին մասնակցելու համար վերապատրաստողը պետք է ներկայացնի դասընթացի ծրագիր՝ կենտրոնի կողմից մշակված օրինակելի կառուցվածքին ու չափանիշներին համապատասխան:

12. Մրցութային ընտրության արդյունքում կենտրոնը ձևավորում և վարում է վերապատրաստում իրականացնող դասընթացավարների շտեմարան:

3.ԴԱՍԱԽՈՍԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

13. Դասախոսի անհատական ծրագիրն ավարտվում է ամփոփիչ կամավոր ատեստավորմամբ:

14. Ատեստավորման կարգն ու պայմանները սահմանվում են առանձին ատեստավորման ընթացակարգով, որն ընդունվում է ատեստավորող հանձնաժողովի կողմից:

15. Դասախոսի ատեստավորումն իրականացնում է ատեստավորման հանձնաժողովը:

Հանձնաժողովի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 19-ը: Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս քան տարեկան 2 անգամ:

Հանձնաժողովի անհատական կազմը հաստատվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով:

16. Ատեստավորման հանձնաժողովը՝

1) մշակում ու հրապարակում է ատեստավորման, միավորների հաշվարկման, հաստատման ու վերապատրաստման գործընթացը կանոնակարգող այլ կարգեր,

2) սահմանված կարգով իրականացնում է դասախոսների ատեստավորումը:

17. Ամփոփիչ ատեստավորումն անցած դասախոսներին տրամադրվում է սահմանված նմուշի վկայական, որում նշվում են ստացած միավորները:

18. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի ատեստավորում անցած և 20 միավորը հաղթահարած հիմնական դասախոսի մեկ դրույք աշխատավարձը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Ա_{Հ} = Ա_{Ս}*(1.2+(Մ-20)*0.02),$$

որտեղ՝

$Ա_{Հ}$-ն ատեստավորում անցած դասախոսի ամսական աշխատավարձն է (առանց հավելավճարի ու լրավճարի),

$Ա_{Ս}$-ն պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորում չանցած կամ 20 միավորի շեմը չհաղթահարած, բայց նույն կոչումը, գիտական աստիճանն ու պաշտոնն ունեցող այլ դասախոսի ամսական աշխատավարձն է (առանց հավելավճարի ու լրավճարի),

Մ-ն ատեստավորման արդյունքում հավաքած միավորների քանակն է:

19. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի ատեստավորում անցած և 20 միավորը հաղթահարած, ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսի ամսական աշխատավարձը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Ա_{Ժ} = Ա_{Ժամ}*Ժ*(1.2+(Մ-20)*0.02),$$

որտեղ՝

$Ա_{Ժ}$-ն ատեստավորում անցած, ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսի աշխատավարձն է,

$Ա_{Ժամ}$-ը պրոֆեսորադասախոսական համակազմի ատեստավորում չանցած կամ 20 միավորի շեմը չհաղթահարած, բայց նույն կոչումն ու գիտական աստիճանն ունեցող, ժամավճարային հիմունքներով աշխատող այլ դասախոսի մեկ ժամվա համար վարձատրությանն չափն է,

Ժ-ն ամսական ժամաքանակն է,

Մ-ն ատեստավորման արդյունքում հավաքած միավորների քանակն է:

20. ԵՊՀ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին չմասնակցած, սակայն ատեստավորմանը մասնակցող դասախոսների միավորները սահմանվում, հաստատվում ու հաշվարկվում են ատեստավորման ընթացակարգով: Նման դեպքերում

դասախոսի վարձատրությունը բարձրացվում է սույն կարգի 18-րդ ու 19-րդ կետերով սահմանված չափերով՝ ըստ սահմանված բանաձևի:

21. Դասախոսի հաստիքային դրույքաչափի բարձրացումը տեղի է ունենում ատեստավորմանը հաջորդող ֆինանսական տարվա սկզբին:

4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

22. Ծրագիրը եռափուլ է, ըստ այդմ՝ իրականացվելու է երեք ուսումնական տարում՝ 2023-2024 թթ., 2024-2025 թթ. և 2025-2026 թթ.:

Յուրաքանչյուր փուլին կարող է մասնակցել մինչև 200 դասախոս: Մասնակիցների ցանկում դասախոսն ընդգրկվում է առավել վաղ դիմում ներկայացնելու սկզբունքով մինչև սահմանված թվի լրանալը:

23. Դասախոսների վերապատրաստման ծրագրի ֆինանսավորման աղբյուրներն են՝

1) ԵՊՀ միջոցները,
2) դրամաշնորհային և այլ ծրագրերի շրջանակում հավաքագրվող միջոցները:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

24. Սույն կարգը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և գործում է մինչև 2026 թ. դեկտեմբերի 31-ը:

25. Սույն կարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

26. Սույն կարգը հրապարակվում է ԵՊՀ պաշտոնական կայքէջում:

27. Կենտրոնը ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներում կազմակերպում է սույն կարգի դրույթների պատշաճ իրազեկման աշխատանքները:

ՀԱՎԵԼՎԱԾ 2
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2023 թ. փետրվարի 9-ի թիվ 6/7 որոշման

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Հ. Վ. Հովհաննիսյան

ԾՐԱԳԻՐ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի 2023-2026 թթ. վերապատրաստման

Երևան 2023

I. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՊՀ-ՈՒՄ

Հայաստանի անկախությունից հետո Երևանի պետական համալսարանում դասախոսների վերապատրաստումը սկսվել է 2011 թ. և իրականացվել երկու փուլով՝ համապատասխան ծրագրերի շրջանակում.

- ***առաջին փուլ (2011-2016 թթ.)*** – պրոֆեսորադասախոսական կազմի կրեդիտային համակարգով իրականացվող որակավորման բարձրացում (ՈԲ)՝ միտված որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան ԵՊՀ դասախոսական կազմի համալրմանն ու բարելավմանը,
- ***երկրորդ փուլ (2016-2021 թթ.)*** – ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մի շարք խնդիրների լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ «Կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի» իրականացում:

2021 թ. ավարտվել է ՈԲ երկրորդ փուլը, և անհրաժեշտություն է առաջացել մշակելու դասախոսների՝ ԵՊՀ նոր ռազմավարական ծրագրի առաջնահերթություններին համապատասխան վերապատրաստման ծրագիր ու իրականացման կարգ:

Սույն փաստաթուղթը ներկայացնում է ԵՊՀ դասախոսների վերապատրաստման 2023-2026 թթ. ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր):

II. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրը մշակվել է հետևյալ փաստաթղթերի, հետազոտությունների, ինչպես նաև հանդիպումների/քննարկումների հիման վրա.

(1) Երևանի պետական համալսարանի 2021-2026 թթ. զարգացման ռազմավարական ծրագիր (այսուհետ՝ ռազմավարություն),

(2) ԵՊՀ կրթական ծրագրի մասնագրերի՝ ԵՊՀ դասախոսական կազմին ներկայացվող պահանջների բաժին,

(3) ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի կողմից 2021 թ. պատրաստված 2016-2021 թթ. որակավորման բարձրացման ԵՊՀ կրթական ծրագրի գնահատման հաշվետվություն,

(4) «Հանրային քաղաքականության ինստիտուտ» հետազոտական կենտրոնի 2015 թ. հրապարակած «Դասախոսների որակավորման բարձրացման միջոցառումների որակն ու արդյունավետությունը (ԵՊՀ օրինակով)» հետազոտության զեկույց,

(5) 2022 թ. ապրիլ-հունիս ամիսներին ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնի (այսուհետ՝ ՇԿԿ) հանդիպումների/քննարկումների արդյունքները ԵՊՀ տարբեր ամբիոնների դասախոսների հետ,

(6) ՇԿԿ ծրագրային տվյալներ ու հաշվետվություններ:

Վերոնշյալ հետազոտությունների ու հանդիպում-քննարկումների արդյունքում արձանագրվել են Դասախոսների որակավորման բարձրացման (ՈԲ) ծրագրերով մինչ օրս

կազմակերպված դասընթացների ինչպես ձեռքբերումները, այնպես էլ խնդիրները (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. 2011-2016 և 2016-2021 թթ. ՈԲ ծրագրերի ձեռքբերումներն ու խնդիրները	
Ձեռքբերումներ	**Խնդիրներ**
• 2011-2021 թթ. ընթացքում առաջին փուլով վերապատրաստվել է 867, իսկ երկրորդ փուլով՝ 748 դասախոս: • Պարտադիր վերապատրաստման պահանջը նպատակաուղղում է դասախոսներին կատարելագործել իրենց մասնագիտական կարողությունները: • Բազմաթիվ դասախոսներ վերապատրաստումների շնորհիվ բարելավել են անգլերենի իմացության մակարդակը: • Որոշ դասընթացներ, ինչպես, օրինակ, դասավանդման ժամանակակից մեթոդները, դասավանդման թվային գործիքները, օգտակար են եղել և առանձնացվում են դասախոսների կողմից:	• Դասախոսները վերապատրաստումներին մասնակցելու բավականին ցածր մոտիվացիա ունեն, ինչի պատճառները մի քանիսն են, որոնց թվում՝ աշխատավարձի ու աշխատանքային պայմանների վրա վերապատրաստումների ունեցած աննշան ազդեցություն, աշխատանքային բարձր ծանրաբեռնվածություն, արտասահմանյան վերապատրաստումների հնարավորության բացակայություն, առաջարկվող որոշ դասընթացների/ վերապատրաստումների բովանդակության որակական խնդիր: • Դասընթացների պարտադիր բնույթը խնդրահարույց է: Անհրաժեշտ է ավելի ճկուն մոտեցում, որը վերապատրաստվող դասախոսներին ընտրության ավելի լայն հնարավորություն կտա՝ ելնելով իրենց կարիքներից: • Որոշ դասընթացների բովանդակությունը թիրախային չէ և չի համապատասխանում դասախոսների իրական կարիքներին, իսկ մասնակցությունը կրում է ձևական բնույթ:

Նոր՝ 2023-2026 թթ. ծրագիրը հաշվի է առնում և՛ հետազոտությունների, և՛ ՇԿԿ հանդիպումների արդյունքում երևան եկած խնդիրներն ու առաջարկությունները: Ծրագիրն առավելագույնս ուղղված է ԵՊՀ 2021-2026 թթ. ռազմավարական ծրագրի համապատասխան նպատակների ու խնդիրների ուղղությամբ առաջխաղացման ապահովմանը և ԵՊՀ կրթական ծրագրի մասնագրերում ամրագրված դասախոսական կազմին ներկայացվող պահանջների բավարարմանը: Քանի որ ռազմավարությամբ սահմանված բարձրորակ կրթության, գիտության ու նորարարության նպատակներին հասնելու առաջնային նախապայմաններից է դասախոսական անձնակազմի կարողությունների զարգացումը, սույն ծրագիրն ուղղված է առաջին հերթին անհրաժեշտ կարողությունների զարգացմանը:

III. 2023-2026 ԹԹ. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագրի նպատակներն են.

1) բարելավել և արդիականացնել դասախոսների գիտակարգային/մասնագիտական գիտելիքները,
2) բարձրացնել/բարելավել/արդիականացնել դասախոսների դասավանդման կարողությունները/հմտությունները,
3) բարձրացնել/բարելավել/արդիականացնել դասախոսների գիտական և հետազոտական աշխատանքներ կատարելու կարողություններն ու հմտությունները,
4) զարգացնել դասախոսների ընդհանրական հմտություններն ու կարողությունները,
5) դասախոսների վերապատրաստումների միջոցով նպաստել նաև ակադեմիական միջավայրին հատուկ ու վերջինիս զարգացմանը նպաստող ակադեմիական բարեվարքության ու էթիկայի համակարգերի ներդրմանը:

Սույն ծրագրով Երևանի պետական համալսարանի դասախոսներից ակնկալվում են հետևյալ կարողունակությունները[1].

1. մասնագիտական կարողունակություն,
2. դասավանդելու կարողունակություն,
3. հետազոտական կարողունակություն,
4. հաղորդակցվելու կարողունակություն:

1. Մասնագիտական կարողունակություն

Նկարագրություն

Դասախոսները ծանոթ են իրենց մասնագիտության/գիտակարգի տեսական ու գործնական վերջին զարգացումներին և կարողանում են այդ իմացությունը կիրառել/ինտեգրել իրենց

[1] Կարողունակությունը ուսումնառության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների ու դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճորեն արձագանքելու ու գործելու ձևն է, վերաբերմունքի ու արժեքների համակարգ, որը թույլ է տալիս տվյալ ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ:

ուսումնական ծրագրերում, ինչպես նաև գիտական աշխատանքներում: Կարողանում են տեսական ու գործնական գիտելիքիներն օգտագործել՝ նոր գիտելիք կամ մասնագիտական արդյունք ստեղծելու համար: Ինքնակրթության, ֆորմալ, ոչ ֆորմալ ու ինֆորմալ կրթության միջոցով դասախոսները շարունակաբար զարգացնում և ընդլայնում են իրենց մասնագիտությանն ու գիտակարգին առնչվող գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

2. Դասավանդելու կարողունակություն

Նկարագրություն: Դասախոսները տիրապետում են դասավանդման/ուսուցման արդի մեթոդներին, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաներին, կրթության արդի տեսություններին և կիրառում են դրանք ուսումնական գործընթացում՝ կազմելով ու իրականացնելով դասավանդած առարկային հարիր ուսումնական արդի ծրագիր, բազմագործոն գնահատում և ստեղծելով ուսուցման արդյունավետ միջավայր:

3. Գիտական և հետազոտական կարողունակություն

Նկարագրություն

Դասախոսները կարողանում են ձևակերպել հետազոտական հարց, մշակել համապատասխան մեթոդաբանություն և իրականացնել արդիական հետազոտական ծրագրեր: Դասախոսները ծանոթ են ակադեմիական բարեվարքության սկզբունքներին, խստորեն պահպանում են դրանք՝ հետևելով, որ ուսանողները ևս պահպանեն բարեվարքության սկզբունքները: Դասախոսները կարողանում են կազմել մրցունակ գիտական հայտեր և ղեկավարել գիտական ծրագրեր, գրել և միջազգային ու տեղական առաջատար ամսագրերում հրատարակել գիտական հոդվածներ:

4. Հաղորդակցվելու կարողունակություն

Նկարագրություն

Դասախոսները կարողանում են արդյունավետ հաղորդակցվել հայերեն ու անգլերեն (և՛ գրավոր, և՛ բանավոր), ներառյալ մասնագիտական ու ակադեմիական հաղորդակցությունը: Դասախոսները տիրապետում են հաղորդակցության թվային գործիքներին և կարողանում են ըստ անհրաժեշտության կիրառել դրանք, արդյունավետ հաղորդակցվել ուսանողների ու գործընկերների հետ: Դասախոսները տիրապետում են հաղորդակցության էթիկայի կանոններին, տարբեր իրավիճակներում դրսևորում են հաղորդակցվող կողմերի տարբերությունները հաշվի առնող ու խտրականությունը բացառող միջանձնային հարաբերությունների կարգավորմանը նպաստող վարք:

IV. 2023-2026 ԹԹ. ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ծրագիրը բաղկացած է ընդհանուր առմամբ հինգ (5) բաղադրիչներից, որոնք գնահատվում են երկու՝ վերապատրաստման ու կիրառման փուլերում: Վերապատրաստման փուլում կուտակվում է առավելագույնը 18, իսկ կիրառման փուլում՝ 12 միավոր: Այսպիսով՝ ծրագրով կուտակվում է առավելագույնը 30 միավոր:

Վերապատրաստման փուլում միավորների բաշխումն ըստ բաղադրիչների կատարվում է հետևյալ սկզբունքով՝

1. գիտակարգային/մասնագիտական գիտելիքներ (4,5 միավոր),
2. դասավանդման կարողություններ/հմտություններ (4,5 միավոր),
3. գիտական ու հետազոտական կարողություններ (4 միավոր),
4. ակադեմիական միջավայր (2,5 միավոր),
5. ընդհանրական հմտություններ (2,5 միավոր):

Կիրառման փուլում միավորների բաշխումն ըստ բաղադրիչների կատարվում է հետևյալ սկզբունքով՝

1. գիտակարգային/մասնագիտական գիտելիքներ (3 միավոր),
2. դասավանդման կարողություններ/հմտություններ (4 միավոր),
3. գիտական ու հետազոտական կարողություններ (3 միավոր),
4. ակադեմիական միջավայր (2 միավոր),
5. ընդհանրական հմտություններ (0 միավոր):

Յուրաքանչյուր բաղադրիչ մասնակից դասախոսներին առաջարկում է վերապատրաստման մի քանի հնարավոր տարբերակ/թեմա, և դասախոսն ինքն է ընտրում իր ցանկացած վերապատրաստումը՝ առաջին հերթին իր կարիքներից ու առաջնահերթություններից

ելնելով ու ձևավորելով անհատական փաթեթը: Այսինքն՝ մեկ բաղադրիչով նախատեսված առավելագույն կրեդիտները հավաքելու համար դասախոսը կարող է ազատ ընտրություն կատարել այդ բաղադրիչի համար նախատեսված դասընթացների/վերապատրաստումների միջև:

Յուրաքանչյուր վերապատրաստվողի անհատական ծրագրի առաջին ու երկրորդ փուլերի առավելագույն գումարային կշիռը հաշվարկվում է «18+12 սկզբունքով», այսինքն՝ ինչպես վերապատրաստման, այնպես էլ կիրառման փուլերը, անկախ ընտրված թեմաների քանակից, չեն կարող գերազանցել տվյալ բաղադրիչի առավելագույն միավորների քանակը:

Ստորև Աղյուսակ 2-ում ներկայացված է ԵՊՀ դասախոսների վերապատրաստման 2023-2026 թթ. ծրագրի կառուցվածքը:

Աղյուսակ 2. Դասախոսների վերապատրաստման 2023-2026 թթ. ծրագրի կառուցվածքը

	Ծրագրի բաղադրիչի անվանումը	**Վերապատրաստման միավորներ**	**Կիրառման միավորներ**
1.	**Գիտակարգային/մասնագիտական գիտելիքներ**	**4,5**	**3**
1.1.	Միջգիտակարգային մասնագիտական հարթակներ	1-3	2
1.2.	Արտասահմանյան հրավիրյալ մասնագետների կողմից մասնագիտական սեմինարներ/ դասընթացներ	1-3	1
1.3.	Կարճաժամկետ մասնագիտական վերապատրաստում արտասահմանում	1,5	1
1.4.	Երկարաժամկետ մասնագիտական վերապատրաստում արտասահմանում	3	2
2.	**Դասավանդման կարողություններ/ Հմտություններ**	**4,5**	**4**
2.1.	Դասավանդման/ուսուցման արդի մեթոդներ	1-2,5	2
2.2.	Գնահատման մեթոդներ	1,5	1
2.3.	Ուսումնական ծրագրի մշակում	1-3	2
2.4.	Համակցված երկարաժամկետ դասընթաց. ուսումնական ծրագրի մշակում, գնահատում, դասավանդման մեթոդներ	3	3
3.	**Գիտական ու հետազոտական կարողություններ**	**4**	**3**
3.1.	Հետազոտական մեթոդներ (ըստ մասնագիտությունների)	2	2
3.2.	Հետազոտական/գիտական հայտի մշակում	1-2	2
3.3.	Գիտական հոդվածների հրատարակություն	1	1-2
3.4.	Գիտական/հետազոտական ծրագրի կառավարում	1-2	1

4.	**Ակադեմիական միջավայր**	**2,5**	**2**
4.1.	Ակադեմիական բարեվարքություն	1-2,5	1
4.2.	Ակադեմիական էթիկա	1-2,5	1
5.	**Ընդհանրական հմտություններ**	**2,5**	**0**
5.1.	Լեզուներ (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն)	2,5	0
5.2.	Թվային հմտություններ	1-3	0
5.3.	Հաղորդակցման հմտություններ	1	0
5.4.	Միջմշակութային հաղորդակցություն	1	0
5.5.	Քննադատական մտածողություն	1-2	0
5.6.	Առաջնորդություն	1-2	0
5.7.	Ժամանցային, սպորտային և այլ միջոցառումներ	1	0
5.8.	Այլ	1-2	0
ԸՆԴԱՄԵՆԸ		**18**	**12**

Ելնելով ԵՊՀ ռազմավարական ծրագրի առաջնահերթություններից՝ առավելագույն կշիռ ունեն «Գիտակարգային/մասնագիտական գիտելիքներ», «Դասավանդման կարողություններ/հմտություններ» բաղադրիչները, ինչպես նաև «Գիտական և հետազոտական կարողություններ» ու «Ակադեմիական միջավայր» բաղադրիչները համատեղ: